«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 04. 01. 2024 թ. թիվ 13 Ն/Մ հրամանի

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2024-2025ԹԹ. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 7 28.12.2023թ.

ՎԱՆԱՁՈՐ 2023

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջազգայնացման քաղաքականությունը սահմանում է համալսարանի միջազգայնացման առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները:

Միջազգայնացումը Համալսարանի ռազմավարական առաջնահերթություններից է՝ ուղղված առաջատար բուհերի և միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության միջոցով ժամանակակից պահանջների համաձայն բարձրորակ մասնագետների պատրաստման և հետազոտության զարգացմանը, բուհի ուսանողական, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի միջազգային շարժունության նոր հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև բուհի մրցունակության բարձրացմանը ազգային և միջազգային մակարդակներում:

Համալսարանն իր առջև նպատակ է դնում արձագանքել միջազգային բնույթի նախաձեռնություններին, ընդլայնել միջազգային համագործակցային միջավայրը, խթանել մասնակցությունը միջազգային գիտահետազոտական ծրագրերին, բարձրացնել շահակիցների իրազեկվածությունը համագործակցային ծրագրերի վերաբերյալ:

Համալսարանը կարիքների հետազոտման արդյունքում իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- ✓ դրական փորձի ներդրման նպատակով կատարել միջազգայնացման բենչմարքինգ,
- ✓ բարելավել բուհական մարքեթինգը՝ Համալսարանիի տեսանելիության մակարդակը բարձրացնելու նպատակով,
- ✓ ընդլայնել և բարելավել համագործակցությունը արտասահմանյան բուհերի հետ,
- ✓ նպաստել Համալսարանում օտարալեզու կրթական ծրագրերի և դասընթացների ներդրմանն ու իրականացմանը,
- ✓ նպաստել ուսանողների և աշխատակիցների ներգնա և արտագնա շարժունությանը,
- ✓ խթանել Համալսարանի գիտահետազոտական գործունեությունը միջազգային

ասպարեզում,

Միջազգայնացման ընդլայնումը և միջազգային մրցունակության բարձրացումը համալսարանի առաջնահերթ ուղղություններից են:

Միջազգայնացման քաղաքականության շրջանակներում Համալսարանի որդեգրած հիմնական ուղղությունները հետևյալներն են.

1. **Կրթության միջազգայնացում**

Համալսարանը շարունակում է խթանել ուսանողների և աշխատակիցների ներգնա և արտագնա շարժունությունը՝ արտասահմանյան բուհերի դրական փորձը Համալսարանում ներդնելու նպատակով: Ուսանողների և աշխատակիցների շարժունության կանոնակարգի վերամշակումը կապահովի շարժունության գործընթացի թափանցիկությունը: Համալսարանը կվերանայի շարժունության մոնիթորինգի և Համալսարանում դրական փորձի ներդրման մեխանիզմները և կկատարի միջազգայնացման չափանշում: Համալսարանը նպաստելու է օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման աշխատանքներին և ընդլայնելու է Համալսարանի միջազգայնացումը՝ օտար լեզվի խթանման և օտարալեզու դասընթացների և նրանց կրթական ծրագրերի ներդրման միջոցով:

2. **Գիտության միջազգայնացում**

Համալսարանը նպաստում է հետազոտությունների և նորարարությունների զարգացմանը և առանձնահատուկ կարևորություն է տալիս հետազոտությունների բարձր որակին, նպաստելով հետազոտական ենթակառուցվածքի զարգացմանը և հետազոտական ծրագրերի միջազգայնացմանը: Համալսարանը խթանում է օտարերկրյա համալսարանների միջազգային հետազոտական կենտրոնների հետ համագործակցությանը համատեղ հետազոտական նախագծերի, ասպիրանտական, դոկտորական ծրագրերի իրականացմանը, միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Համալսարանը ընդլայնում է համագործակցության շրջանակներն այն ոլորտներում, որոնք կարող են շահեկան լինել Համալսարանի գիտահետազոտական գործունեությունը խթանելու համար:

3. **Միջազգային համագործակցության զարգացում**

Համալսարանը համատեղ միջազգային ծրագրերի և նախագծերի իրականացումը դիտարկում է որպես իր համար ռազմավարական նշանակություն ունեցող

ոլորտներում միջազգային գործընկերների հետ համագործակցության զարգացման և ընդլայնման գործիք: Համալսարանը մասնակցում է միջազգային հայտարարված դրամաշնորհային ծրագրերին և ընդլայնում է միջազգային համագործակցության շրջանակները: Համալսարանը համագործակցում է.

- միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում «Էրազմուս+» նախագծի շրջանակներում,
- Անմիջական համագործակցություն օտարերկրյա համալսարանների հետ
- Համագործակցություն տեղական կառույցների հետ

4. Միջազգային վարկանիշի ամրապնդում

Միջազգային վարկանիշը համարելով համալսարանի գրավչության բարձրացման գործոն, համալսարանը ձգտում է ներգրավվելու վարկանիշային աղյուսակում, միջազգային կրթական շուկայում համալսարանի հեղինակության բարձրացմանը: